ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5583-Ա «13» նոյեմբերի 2026 թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 3-Ի N 5365-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով Երևանի քաղաքապետի 2026 թվականի նոյեմբերի 13-ի N 5540-Ա որոշումը՝

1. Երևանի քաղաքապետի 2026 թվականի նոյեմբերի 3-ի «Երևանի ավագանու 7-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին» N 5365-Ա որոշմամբ հաստատված հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Հավելված

Երևանի քաղաքապետի

13.11. 2026 թ.

Հ. 5583-Ա որոշման

«Հավելված
Երևանի քաղաքապետի
03.11.2026թ.
Հ. 5365-Ա որոշման

ՕՐԱԿԱՐԳ
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 7-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՆԻՍՏԻ

1. Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին: (Չզեկուցվող)
2. Երևան քաղաքի ավագանու 2017 թվականի մայիսի 30-ի N724-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
3. Երևան քաղաքում փողոցներ, նրբանցքներ և փակուղիներ անվանակոչելու մասին: (Չզեկուցվող)
4. Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի N46-Ն, Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 22-ի N 301-Ն և Երևան քաղաքի ավագանու 2020 թվականի հունիսի 24-ի N 253-Ն որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
5. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 483-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին: (Չզեկուցվող)
6. «Երևանի սոցիալական ծառայությունների կենտրոն» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն ստեղծելու և կանոնադրությունը հաստատելու մասին: (Չզեկուցվող)
7. Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի N 463-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին: (Չզեկուցվող)
8. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Չզեկուցվող)
9. Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/10 հասցեում գտնվող՝ սեփականության իրավունքով «Ասլենդ» ՓԲԸ-ին պատկանող հողամասը Ծիծեռնակաբերդի խճուղի հ.2/10 հասցեին կից գտնվող՝ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի հետ փոխանակությանը համաձայնություն տալու մասին: (Չզեկուցվող)
10. Հաղթանակ 9-րդ փողոց 1-ին նրբանցք հ.1բ հասցեում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Չզեկուցվող)
11. Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող՝ պետության և համայնքային սեփականությունը համարվող ընդհանուր օգտագործման տարածքներում (փողոցներում,

հրապարակներում, զբոսայգիներում և այլ տարածքներում) համայնքի կողմից հայտնաբերված դեն նետված գույքը կամ դեն նետված մետաղների ջարդոնը, խոտանված արտադրանքը, օգտակար հանածոների արդյունահանման ժամանակ առաջացած լցակույտերը, արտադրական և այլ թափոնները հատուկ տարածք տեղափոխելու, դա կամ դրանք այնտեղ պահելու և հաշվառելու կարգը սահմանելու մասին: (Չզեկուցվող)

12. Վարչական իրավախախտման կատարման ընթացքում օգտագործվող (վարչական իրավախախտում կատարելու գործիք կամ անմիջական օբյեկտ հանդիսացող) և վարչական իրավախախտում կատարած անձին կամ երրորդ անձին սեփականության իրավունքով պատկանող առգրավված առարկաները վերադարձնելու կարգը սահմանելու մասին: (Չզեկուցվող)

13. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Քըրք Քըրքորյան փողոցի հ.23/22 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

14. Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի Շինարարների փողոց հ.23 հասցեում բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

15. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Զորավար Անդրանիկի փողոց հ.56/1 հասցեում բազմաֆունկցիոնալ հասարակական նշանակության շինության կառուցման նախատեսվող գործունեությանը իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

16. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Աբովյան փողոցի հ.36/6 հասցեում այգու բարեկարգման, հասարակական նշանակության շինության կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

17. Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Միկոյան փողոցի հ.16/5 հասցեում վարչատնտեսական համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

18. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 4-րդ թաղամաս հ.45/12 հողամաս հասցեում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանն անհամաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

19. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Արմենակյան փողոցի հ. 119 հասցեում «Երևանի երեխայի խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաշենքերի վերակառուցման, հիմնանորոգման, ընդլայնման, նոր օժանդակ շինությունների կառուցման և բակի բարեկարգման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

20. Երևան քաղաքի Նորք-Մարաշ վարչական շրջանի Արմենակյան փողոցի հ. 197ա հասցեում «Երևանի տարեց և հաշմանդամություն ունեցող անձանց խնամքի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության մասնաշենքերի հիմնանորոգման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

21. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Դրոյի փողոց հ.11/2 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Չզեկուցվող)

22. «ՀՀ Երևանի «Կենտրոն» վարչական շրջանի թիվ 22 գրադարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունն անվանակոչելու և կանոնադրության մեջ փոփոխություն կատարելու մասին: (Չզեկուցվող)

23. Երևան քաղաքի Ֆուչիկի փողոցն անվանափոխելու մասին: (Չզեկուցվող)

24. Որպես նվիրատվություն գույք ընդունելու մասին: (Չզեկուցվող)

25. Գույքը սեփականության իրավունքով անհատույց հանձնելու մասին: (Զեկուցվող)»:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ **ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ**